Հոգևոր Մեմարան և 1995 թ. ավարտել լրիվ դասընթացը: 1995 թ. հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արարաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1995 թ. հուլիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կյանքն ու գրական վաստակը» թեմայով, և արժանացել «գերազանց» գնահատականի: 1996 թ. նոյեմբերի 24-ին, հրամանով Վեհափառ Հայրապետի և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԲԱՐՍԵՂ ԱԲԵՂԱ ՓԻԼԱՎՉՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 29-ին Էջմիածին քաղաքում: 1978-89 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Մեմարան և 1995 թ. ավարտել լրիվ դասընթացը: 1995 թ. հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արարաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել՝ «Հայ Եկեղեցին և սփյուռքահայության հայրենադարձությունը 1946-48 թթ.»: 1995-96 թթ. աշխատել է Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում: 1996 թ. նոյեմբերի 24-ին, հրամանով Վեհափառ Հայրապետի և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: